

ԱՄԵՆԱՄՅԱ ՂԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՎԵՐՋԻՆ ՂԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

ԻՆՉՈՒ ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱԶՎԻԼԻՆ ԺԱՄԱՆԱԿԻՑ ԸՈՒՏ ԼՔԵՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Մայիսի 2-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, ամենամյա հաշվետվությանը, հանդես է եկել երկրի օրենսդիր բարձրագույն մարմնի առջև:

Նախագահական ժամկետի ավարտին, երկրի չորրորդ նախագահի ամենամյա վերջին հաշվետվությանը, օրենսդիր մարմնի պատգամավորներից բացի, ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի կառավարության անդամներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, միջազգային, ոչ կառավարական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, լրագրողներ:

Ընթացակարգով սահմանված մեկ ժամի փոխարեն 20 րոպեանոց իր խոսքում, նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին փորձեց հանրագումարել նախագահական իր ժամանակահատվածի գործունեությունը՝ մակերեսորեն անդրադառնալով երկրի իրատեսիլ թեմաներին: Նախագահը, խոսելով մեր սահմանադրության շուրջ, պատգամավորներին խորհուրդ տվեց, նախքան մեր հիմնական



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆԱՏՕ-ԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԻՆՏԵԳՐԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 30-ին, աշխատանքային այցով Թբիլիսիում էր ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի գործերով օգնական Ուես Միթչելը:



Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու եւ ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյայի համոզմամբ, կողմերը քննարկել են վրաց-ամերիկյան երկկողմ ռազմավարական հարաբերություններին, այլապես Վրաստանի ինտեգրմանն առնչվող հարցեր: Յանդիսան ավարտին կայացած մամուլ ասուլիսում Ուես Միթչելը հայտարարել է, որ Վաշինգտոնը մեծապես կարելու է Վրաստանի հետ ռազմավարական հարաբերությունների զարգացումը:

Իր հերթին, Վրաստանի վարչապետը նշել է, որ «ԱՄՆ հաստատակամորեն պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը՝ մեր երկրի

կան հարաբերություններին, այլապես Վրաստանի ինտեգրմանն առնչվող հարցեր: Յանդիսան ավարտին կայացած մամուլ ասուլիսում Ուես Միթչելը հայտարարել է, որ Վաշինգտոնը մեծապես կարելու է Վրաստանի հետ ռազմավարական հարաբերությունների զարգացումը:

Իր հերթին, Վրաստանի վարչապետը նշել է, որ «ԱՄՆ հաստատակամորեն պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը՝ մեր երկրի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՐԵՎԱՆ. ԻՐԱՂԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ ՏԱՊԱԼՎԵՑ

ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻԷ ԱՐՆԻՍՏՈՒՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԻՍԿ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՆՈՐԻՑ ԵՒ ԿՈՒՆԿՆԱԿՆԵՐԻ

Ինչպես հաղորդել էինք թերթի նախորդ համարում, Ազգային ժողովի կողմից ապրիլի 17-ին Յախտանի վարչապետի պաշտոնում Սերժ Սարգսյանի թեկնածության հաստատումից հետո՝ երկրում ծավալվեց համաժողովրդական շարժում: Այն չդադարեց նաև Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո: Այս անգամ ժողովուրդը հանդես էր գալիս Ազգային ժողովի «Ելք» խմբակցության անդամ Նիկոլ Փաշինյանին՝ երկրի վարչապետ ընտրելու պահանջով:

Մայիսի 28-30-ը Նիկոլ Փաշինյանը, «Քայլ արա» շարժման անդամների ուղեկցությամբ, հանրահավաքներ անցկացրեց Գյումրիում, Վանաձորում, Իջևանում, Յախտանի մյուս բնակավայրերում: Վերադառնալով Երևան, Նիկոլ Փաշինյանը, որպես «Ելք» խմբակցության կողմից առաջադրված թեկնածու, հանդիպումներ ունեցավ Ազգային ժողովի խմբակցությունների ներկայացուցիչների հետ, նրանց ներկայացնելով երկրի արտաքին եւ ներքին քաղաքականության հարցերով իր տեսլականը:

ՀՍՏԱՎԵՑՎԵՑ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՐԱՔԱՎԱՆ ԿՈՒՐՍԸ

Յախտանի վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանը վստահեցնում է, որ իր վարչապետի պաշտոնում ընտրվելու դեպքում Յախտանը շարունակելու է մնալ Եվրասիական տնտեսական միության եւ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ:

մակերպության անդամ: Նրա խոսքով, այդ դիրքորոշումը բխում է ոչ թե ինչ-որ անձի ճաշակից, ոչ թե ինչ-որ անձի դիրքորոշման փոփոխությունից, այլ՝ «Յախտանի ժողովրդին հաղթանակ բերած համաժողովրդական շարժման տրամաբանությունից»:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 9-Ը ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

Այդ օրը նշվում է գերմանական ֆաշիզմի դեմ հաղթանակը: Այս տարի լրանում է Մեծ հաղթանակի 73-ամյակը:

1945 թվականի մայիսի 9-ին, Գերմանիայի զինված ուժերի ներկայացուցիչ Քեյթելը, անգորությունից կողքի դնելով մարշալական մականը, հակահիտլերյան դաշնակից երկրների՝ խորհրդային Միության, ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի ներկայացուցիչների ներկայությամբ, ստորագրեց ֆաշիստական Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որի արդյունքում հաղթանակով պսակվեց 1418 օր ու գիշեր տեսած մահուկենաց կռիվը:



Ժամի ներդրումն ունեցան նաև վրաց եւ հայ ժողովուրդները: Այս երկու համեմատաբար փոքր ազգերն առանձնակի թանկ վճարեցին այդ հաղթանակի համար՝ նրանցից յուրաքանչյուրը զոհատեղանին միլիարդերեց իր հազարավոր զավակների կյանքը:

(Նորագրի շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԵՐ

Մայիսի 3-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հետ:



Հայկական կողմի նախաձեռնությամբ հեռախոսազրույցում զրուցակիցները քննարկել են Հայաստանում ստեղծված իրավիճակը: Անդրադարձ է եղել նաև վրաց-հայկական հարաբերությունների օրակարգային հարցերին:

Վրաստանի նախագահը Հայաստանի նախագահին իրավիճակ է թբիլիսի մայիսի 26-ին ներկա գտնվելու Վրաստանի Հանրապետության հիմնադրման 100-ամյակի տոնակատարությանը:

ՔՆՆԱՐԿՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՏԵՂՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ



Մայիսի 2-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հետ: Զրուցակիցները քննարկել են Հայաստանում ստեղծված իրավիճակը: Անդրադարձ է կատարվել նաև վրաց-հայկական համագործակցության օրակարգային հարցերին:

կատարվել նաև վրաց-հայկական համագործակցության օրակարգային հարցերին:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ՝ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՈՒՐՁ

Մայիսի 1-ին, Ազգային ժողովում Հայաստանի վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանը, պատասխանելով հայ-վրացական հարաբերությունների վերաբերյալ իր տեսլականի մասին պատգամավորների հարցին, հայտարարեց.

- Հայ-վրացական հարաբերությունները պետք է առավելազույնս զերծ մնան աշխարհաքաղաքական ազդեցությունից, որովհետև շատ դեպքերում այդ հարաբերություններում լարվածություն է առաջացել ոչ թե այն պատճառով, որ երկու երկրների հարաբերությունների բնականորեն գործընթացն է բերել այդ լարվածության, այլ հարցերը դիտարկվել են ոչ թե հայ-վրացական հարաբերությունների, այլ ինչ-որ ուրիշ հարաբերությունների համատեքստում: Հայ-վրացական հարաբերությունները չեն կարող հենված լինել ոչ հայ-վրացական հարթության վրա: Երբեմն այդ փորձերը, այդ սխալները տեղի են ունեցել: Նրանք որոշակի շիկեր արդեն իսկ ստեղծել են: Կարծում եմ, որ, փոխադարձաբար, ինքնուրույն հետ կապված բացառիկ հարգանքը պետք է դառնա այն անկյունաքարը, որի վրա էլ ավելի կիզուրանան հայ-վրացական հարաբերությունները:

ների համատեքստում: Հայ-վրացական հարաբերությունները չեն կարող հենված լինել ոչ հայ-վրացական հարթության վրա: Երբեմն այդ փորձերը, այդ սխալները տեղի են ունեցել: Նրանք որոշակի շիկեր արդեն իսկ ստեղծել են: Կարծում եմ, որ, փոխադարձաբար, ինքնուրույն հետ կապված բացառիկ հարգանքը պետք է դառնա այն անկյունաքարը, որի վրա էլ ավելի կիզուրանան հայ-վրացական հարաբերությունները:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀՐԲԵԼՅԱՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՆՇԵՑ ԻՐ 27-ԱՄՅԱ ՀՐԲԵԼՅԱՆԸ

Ապրիլի 30-ին վրացական բանակը նշեց իր 27-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ, Թբիլիսիի մերձակա Վազիա-նիի զորակայանում անցկացվեց միջոցառում, որին ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ

Վլադիմիր Չաչիբախան: Միջոցառման շրջանակներում՝ անցկացվեց զինվորական շքերթ, որին մասնակցեցին հատուկ պատրաստություն անցած վրացական զորամիավորումներ, ցուցադրվեցին հակատանկային «Ջավելի» հրթիռները, անցկացվեց պաշտպանության նախարարության պաշտպանական նոր կայքէջի շնորհանդես:

ԳՈՐԾԱԴԻՐ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ ՄԵԿՏԵՂ ՊԵՏՔ Է ՆՇՎԵՆ ՆԱԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Մայիսի 3-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:



Գործադիրը իր հերթական նիստում քննարկեց երկրի առջև ծառայած տնտեսական, սոցիալական բնույթի հիմնախնդիրները, հանրակրթական ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքը: Նիստում, մասնավորապես, խոսվեց ընթացիկ տարվա մայիսի 1-ից ծխելն արգելելու օրենքի կիրարկման ընթացքի մասին: Նշվեց, որ բնակչությունն ըմբռնունով է ընդունել տվյալ որոշան կարեւորությունը եւ օգտավետությունը:

Խոսելով հրատապ լուծում պահանջող խնդիրների մասին, Վրաստանի վարչապետը անհրաժեշտ համարեց հիշեցնել, որ, ծառայած հիմնախնդիրների հետ մեկտեղ, պետք է ընդգծվեն նաեւ ձեռքբերումները, նշելով, որ, իրականացված բարեփոխումների արդյունքում, տնտեսական աճի տեմպերն արդեն իսկ գերազանցել են

ծրագրված ցուցանիշները: Վարչապետը նախարարներին հորդորեց հատուկ ուշադրություն բեւեռել կոնկրետ ոլորտներում ծագող հիմնախնդիրների կարգավորման ընթացքին:

ԷԿՈՆՈՄԻԿԱ


ԳՄԻՏՐԻ ՔՈՒՄՍԻԿՎԻԻ. «ՀՆԱ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 5,6 ՏՈԿՈՍ»

Ընթացիկ տարվա առաջին եռամսյակի տնտեսական գործունեության համադրմանը նվիրված մանր աուլիսում, Վրաստանի առաջին փոխվարչապետ, Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գմիտրի Քումսիշվիլին հայտարարեց, որ, ընթացիկ տարվա մարտին, համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) աճը կազմել է 5,6 տոկոս: Անցյալ տարվա համեմատությամբ՝ ընթացիկ տարվա մարտին Վրաստանում գրանցված ձեռնարկություններում շրջանառությունն ավելացել է 12,1 տոկոսով:

կազմել է 110,1 միլիոն դոլար: Գմիտրի Քումսիշվիլու հայտարարությամբ՝ ընթացիկ եւ ծրագրված կառուցվածքային բարեփոխումները կնպաստեն ՀՆԱ-ի աճին: Միաժամանակ, նրա խոսքով, Վրաստանի կառավարությունն ակտիվորեն գործում է փոքր եւ միջին գործարարության զարգացման, ֆինանսական աղբյուրներին դրանց մատչելիության ավելացման, նորամուծությունների խթանման ուղղությամբ: Նշեց, որ, ընթացիկ տարվա առաջին եռամսյակում, տնտեսական աճը կազմել է 5,2 տոկոս:

Խոսելով տնտեսական աճի մասին, Գմիտրի Քումսիշվիլին նշեց, որ դրա պայմանավորող հանգամանքներից մեկը զբոսաշրջության զարգացումն է: «Զբոսաշրջության արդյունքում եկամուտներն ավելացել են: Միայն մարտին այդ ոլորտի եկամուտներն ավե-

լացել են 31,3 տոկոսով եւ կազմել 236,5 միլիոն դոլար: Զբոսաշրջության բաժինը, տնտեսական աճի գործում, կազմում է 3,3 տոկոս»,- հայտարարել է առաջին փոխվարչապետը: Նրա խոսքով, ավելացել է նաեւ դրամական փոխանցումների ծավալը: Այն



2013 ԹՎԱԿԱՆԻՑ ՆԵՐՈՒՄ Է ՇՆՈՐԴՎԵԼ 3655 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, իր նախագահության օրոք, 2013 թվականի դեկտեմբերից մինչ օրս, ներում է շնորհել 3655 բանտարկյալի: Քրեակատարողական եւ պրոբացիայի նախարարության վիճակագրական տվյալներով, ներման արժանացած 1645 բանտարկյալ արգելափակված էր ծանր հանցագործությունների համար: Նրանք առանձնակի ծանր հանցագործությունների համար դատապարտվել էին ավելի քան տասը տարվա պատժաժամկետով: Տարիների կտրվածքով, ներման վիճակագրությունը հետեւյալն է. 2013 թվականին ներում է շնորհվել 71, 2014 թվականին՝ 787-ի, 2015 թվականին՝ 1006, 2016 թվականին՝ 834, 2017 թվականին՝ 840 եւ 2018 թվականի անցած ժամանակահատվածում՝ 117 բանտարկյալի:

ՆՎԱԶԵԼ Է ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԹԻՎԸ

Եվրախորհրդի կողմից Եվրոպայի երկրների բանտերում 2016 թվականին ստեղծված իրավիճակի մասին հրապարակած հաշվետվության մեջ նշված է, որ, 2015 թվականի համեմատ, Վրաստանում բանտարկյալների թիվը նվազել է: Հաշվետվությունում նշված է նաեւ, որ, չնայած դրան, Վրաստանը շարունակում է գտնվել այն երկրների շարքում, որտեղ 100 հազար բնակչի բաժին է ընկնում ավելի քան 100 բանտարկյալ: Հաշվետվության համաձայն, Վրաստանում 100 հազար բնակչի հաշվով, երկրի բանտերում կա 256,3 բանտարկյալ: Այդ ցուցանիշով, Վրաստանը զբաղեցնում է առաջին տեղը: Ցուցակում Վրաստանին հաջորդում են Թուրքիան, Լիտվան եւ Ադրբեյջանը:

Advertisement for 'ՅՅՈՒՆԵՍԿՕ-ԵՎ ՆԱԾԹԱԾՄԵԹՈՅԻՆ ԹՐԱՆՑԵԿՏԻՆ' (UNESCO and Entrepreneurship Exchange). The ad features a logo, a main headline 'ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԾԽԵԼՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՕՐԵՆՔԸ', and detailed text explaining the program's goals and benefits. It includes icons for various services like legal, medical, and educational support. At the bottom, there is a list of partner organizations and a contact number.

